

կը ներկայացընէ¹: Բայց նշանաւոր գիտնական մը կտրած անցած էր աշխարհը: Նրկրախօս Բոխ Րիզէէն ելած է այս լեռնաշղթան՝ տեղացւոց համար սովորական ճամբով², իջնալու համար դէպ ի Սպեր (Թրքաձեւ Ispir)՝ Ծորոխ գետոյ վրայ. բայց վերադարձած է դժուարին ճամբով մը՝ Խեւակէ (քարտէսին վրայ Kevak) անցնելով Համշէնի անգնաց ձորերը, եւ ի վերջոյ իջած Աթինա³: Բոխի մատենանը, թէեւ ցանցառ, տեղեկութիւններ կու տայ նաեւ այն բռնի մահամետականացմանց մասին, որոնց ենթարկուած էր հայ ժողովուրդը՝ լեռնաշղթայիս երկու երեսին վրայ ալ: Եւ Բոխ իւր այսպիսի տեղեկութիւնքն քաղած է նոյն իսկ այն «մահամետական»

¹ Richard Kiepert, Karte von Kleinasien. AVI Tirabzon. Տայոց համար՝ բաց ասկէ նաեւ ուրոյն քարտը՝ BVI Erzerum: «Կ.» = Կիպերոսի այս քարտերը:

² Dr. Karl Koch, Wanderungen im Oriente während der Jahre 1843 und 1844. II. Reise im pontischen Gebirge und Türkisch-Armenien. Weimar 1846. Ի մասնաւորի էջ 1—118. 235 ff.

³ Այս ճամբուն՝ ինչպէս մեր ակնարկին մէջ յիշելի միւս մասերուն՝ արդի ուղիները բաւական լաւ թէեւ համառօտիւ նկարագրած է Charles Wilson, Handbook for Travellers in Asia Minor, Transcaucasia, Persia etc. London 1905, յատկապէս էջ 200—219: